

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» «_____» 2022թ.

N __-Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
N 497-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 497-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

2. Որոշման 2-րդ մասի «5,394,028.6» թիվը փոխարինել «5,217,542.5» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

2022թ. _____ «__»
Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 497-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի եկամտային մասում՝
 - տեղական տուրքերի հաստատված ցուցանիշը ավելացնել 44,225.0 հազ. դրամով, ինչը պայմանավորված է 11.02.2021 թվականի ՀՕ-76-Ն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը կիրառության մեջ մտնելով: Միաժամանակ՝ ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 28.12.2021 թվականի 494-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով, առաջարկվում է Երևան քաղաքի բյուջեից պակասեցնել տնային կենդանիներ պահելու թույլտվությունների համար նախատեսված գումարները:
 - Եկամուտների հաշվառման համակարգերում համապատասխան ուղղումներ և ճշգրտումներ կատարելու արդյունքում, առաջարկվում է համայնքի հողի վարձակալությունից եկամուտների հաստատված ցուցանիշը նվազեցնել 58,647.3 հազ. դրամով:
 - տեղական վճարների հաստատված ցուցանիշը ավելացնել 3,000.0 հազ. դրամով՝ համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար կատարվող վճարներ:
 - Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտներն առաջարկվում է ավելացնել 4,650.0 հազ. դրամով՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով պետական լիազոր մարմինը տնտեսվարող սուբյեկտների հետ կնքում է ընդերքօգտագործման պայմանագրեր, որտեղ վերջիններս ստանձնում են

որոշակի պարտավորություններ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մասով:

- Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար եկամուտները ավելացնել 58,531.7 հազ. դրամ՝ որպես <<Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար>> ծրագրերի շրջանակներում ստացվող դրամաշնորհներ:
- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն և 2022 թվականի փետրվարի 17-ի «ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N2121-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N188-Ն որոշումները, նախատեսվում է Երևան համայնքի 2022 թվականի բյուջեի եկամտային մասում՝ ընթացիկ ու կապիտալ նպատակային հատկացումները (սուբվենցիաները) և պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների կատարման բյուջեն ավելացնել համապատասխանաբար 50,085.0, 4,000.0 և 11,811,552.1 հազ. դրամներով, որը արդեն ըստ ծրագրային նպատակայնության կարտացոլվի Երևան քաղաքի բյուջեի ծախսային մասում:
- Հիմք ընդունելով 2021 թվականի հուլիսի 15-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին վթարային տեխնիկական վիճակ ունեցող շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու ծրագրին հավանություն տալու մասին» 1145-Ն և Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի «Վթարային տեխնիկական վիճակ ունեցող շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու ծրագիրը հաստատելու մասին» N 434-Ա որոշումները՝ առաջարկվում է «Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում» ծրագրով նախատեսել 500,000.0 հազ. ՀՀ դրամ՝ Երևան քաղաքի Արցախի

պողոտա 4-րդ նրբանցք N10 (հանրակացարանի մասնաշենք)/, Արցախի պողոտա 4-րդ նրբանցք N10 (սպորտային մասնաշենք), Արցախի պողոտա 4-րդ նրբանցք N10/1 հասցեների քանդման ենթակա 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող հանրակացարանային թվով 3 շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով:

- Առաջարկվում է «Երբաղլույս» ՓԲԸ-ի և «Երևան ավտոբուս» ՓԲԸ կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղել համապատասխանաբար 148,000.0 հազ. դրամ և 2,366,353.5 հազ. դրամ:
- Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվել էր 4,975,261.2 հազ. դրամ, սակայն փաստացի կազմել է 24,731,805.2 հազ. դրամ: Հաշվի առնելով փաստացի կատարողականի արդյունքները սույն որոշման նախագծով նախատեսվում է ճշգրտել տարեսկզբի ազատ մնացորդի գումարը 19,756,544.0 հազ. դրամով, որից՝ հիմք ընդունելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի ա) կետը նախատեսվում է 30,433.2 հազ. դրամը ուղղել նախորդ բյուջետային տարում վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերի գծով՝ առկա պարտավորությունների կատարմանը /այսուհետ՝ Պարտքեր/, նշված պարտավորությունները կատարելուց հետո առաջացած միջոցների մնացորդն ուղղել առաջարկվող ծախսերի ֆինանսավորմանը, ընդ որում նախագծով առաջարկվող վարչական մասի ծախսերի՝ բացառությամբ Պարտքերի, ֆինանսավորման նպատակով Երևան համայնքի 2022 թվականի բյուջեի եկամտային մասում՝ նվազեցնելով վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների մուտքերը 5,375,454.9 հազ. դրամ:

Այսպիսով առաջարկվում է ճշտման ենթակա տարեսկզբի ազատ մնացորդի գումարը՝ բաշխել հետևյալ կերպ.

- «Կառավարման մարմնի պահպանում» ծրագրին ավելացնել 37,775.4 հազ. դրամ՝ որից 3.6 հազ. դրամը դեռատիզացիոն ծառայությունների ձեռքբերման մասով, որպես պարտքի մարում, 11,573.8 հազ. դրամը կապի ծառայությունների ձեռքբերման մասով, որից հեռախոսակապի

ծառայությունների մասով 1,175.2 հազ. դրամ՝ որպես պարտքի մարում, իսկ փոստային ծառայությունների մասով՝ 5,774.3 հազ. դրամը որպես պարտքի մարում, իսկ 4,624.3 հազ. դրամը պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, 20.1 հազ. դրամը տպագրական աշխատանքների (շնորհակալագրեր, պատվոգրեր) մասով որպես պարտքի մարում, 627.0 հազ. դրամը սոցիալական հոլովակների պատրաստման ծառայությունների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, 17.6 հազ. դրամը կաթսայատան գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մասով որպես պարտքի մարում, 163.0 հազ. դրամը աշխատակազմի աշխատակիցների համար խմելու ջրի ձեռքբերման մասով որպես պարտքի մարում, 980.3 հազ. դրամը աշխատակազմի աշխատակիցների տրանսպորտով փոխադրման ծառայությունների մասով, որպես պարտքի մարում, 19,980.0 հազ. դրամը ներքին ցանցի արդիականացման համար պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, ինչպես նաև 4,410.0 հազ. դրամ նախատեսել վարչական սարքավորումների և պոլիէթիլենային տոպրակների հաստությունը չափող միկրոմետրների ձեռքբերման համար:

- «Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում» ծրագրին ավելալացնել 267,202.5 հազ. դրամ, որից 5,089.5 հազ. դրամ Արաբկիր, Էրեբունի և Կենտրոն վարչական շրջանների վարչական շենքերի նորոգման աշխատանքների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, իսկ 262,113.0 հազ. դրամը Երևանի քաղաքապետարանի թվով 2 վարչական շենքերի տանիքներին ֆոտովոլտային կայանների տեղադրման, Բուզանդ 1/3 վարչական շենքի թվով 17 սանհանգույցների, թվով 2 վերելակների փոխարինման, ինչպես նաև հակահրդեհային համակարգի և Արգիշտի 1 վարչական շենքի գազամատակարարման համակարգի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար:

- «Նախագծային աշխատանքներ» ծրագրին ավելացնել 32,057.1 հազ. դրամ՝ նախագծահետազոտական աշխատանքների մասով, առկա պարտավորությունների մարման նպատակով:
- «Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում» ծրագրով նախատեսված գումարը ավելացնել 100.0 հազ. դրամով՝ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության առկա պարտավորության մարման նպատակով: Առաջարկվում է նաև ծրագրով նախատեսել 235,548.4 հազ. դրամ՝ կանաչ տարածքներում ոռոգման ջրագծերի, Երևան քաղաքի Զովունու խճուղու ոռոգման ցանցի, Արամ Խաչատրյան փողոցի ոռոգման ջրագծի, ինչպես նաև Շենգավիթ վարչական շրջանում Արագած փողոցի վերջնամասում այգու հարակից տարածքի ոռոգման ցանցի հիմնանորոգման և կառուցման աշխատանքների իրականացման համար:
- «Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար» դրամաշնորհային ծրագրով նախատեսել 226,110.2 հազ. դրամ՝ այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով, իսկ «Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար» ծրագրի համաֆինանսավորման մասով՝ այլ ծախսեր հոդվածով՝ 4,103.2 հազ. դրամ՝ պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով: Առաջարկվում է նաև «ԵՄ-ն Երևանի արևային համայնքի համար» ծրագիրը ավարտին հասցնելու նպատակով դրամաշնորհային և համաֆինանսավորման ծրագրերով նախատեսել համապատասխանաբար ևս 200,436.4 հազ. դրամ և 92,861.4 հազ. դրամ:
- «Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» ծրագրով նախատեսված գումարը ավելացնել 3,593.3 հազ. դրամով՝ Դավթաշեն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում ասֆալտապատման աշխատանքների կատարման և աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության համար որպես պարտքի մարում:

- «Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում» ծրագրով նախատեսել 2,000,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքում ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով:
- «Եզրաքարերի վերանորոգում» ծրագրին ավելացնել 446.0 հազ. դրամով՝ Նոր Նորք և Նորք-Մարաշ վարչական շրջանների փողոցների եզրաքարերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության համար որպես պարտքի մարում:
- Առաջարկվում է «Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում» ծրագրին ավելացնել 96,223.2 հազ. դրամով՝ «Հանրապետության հրապարակ» մետրոյի կայարանի վերգետնյա հատվածի քարե շինության վերանորոգման աշխատանքների իրականացման համար:
- Առաջարկվում է 31,760.6 հազ. դրամ ավելացնել «Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում» ծրագրին, որից 372.0 հազ. դրամը՝ Երևան քաղաքի փողոցների, մայրերի վերանորոգման/սալիկապատում/ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար որպես պարտքի մարում՝ 4,532.6 հազ. դրամը Ավան և Շենգավիթ վարչական շրջաններում մայրուղիների և փողոցների վերակառուցման աշխատանքների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, 5,891.5 հազ. դրամը՝ Արաբկիր վարչական շրջանում Ավետիսյան փողոցի և Գյուլբենկյան-Վաղարշյան փողոցների միջև ընկած հատվածի նոր մայրերի կառուցման աշխատանքների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, իսկ 20,964.5 հազ. դրամը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 24-ի հ. 2143-Ն որոշմամբ Երևան քաղաքի Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցներին հարակից տարածքների հանրության գերակա շահի ճանաչումը, նախատեսել Երևան քաղաքի Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան

փողոցների միացնող ճանապարհահատվածի գոյություն ունեցող գույքերի փոխհատուցման նպատակով:

- 6,033.6 հազ. դրամ ավելացնել «Փողոցների պահպանում և շահագործում» ծրագրին, որից 960.0 հազ. դրամը՝ ընթացիկ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար որպես պարտքի մարում, իսկ 5,073.6 հազ. դրամը՝ <<Հանրապետության հրապարակ>> մետրոյի շրջակա տարածքի վերանորոգման աշխատանքների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով:
- 80.0 հազ. դրամ ավելացնել «Թեքահարթակների կառուցում» ծրագրին, Արաբկիր և Աջափնակ վարչական շրջաններում ընթացիկ և կապիտալ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պարտքի մարման և պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով:
- 294,519.8 հազ. դրամ ավելացնել «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում» ծրագրին, որից 38.8 հազ. դրամը՝ հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող թվով 28 լուսացուցային համակարգերի սպասարկման և վթարավերականգնողական ծառայությունների համար որպես պարտքի մարում, 96,860.8 հազ. դրամը՝ հետիոտնային կանչի լուսացուցային համակարգերի ձեռքբերման ու տեղադրման աշխատանքների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, 173.0 հազ. դրամը՝ մետաղական ճաղավանդակների պատրաստման և տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման առկա պարտավորությունների մարմանը, իսկ 197,447.2 հազ. դրամը՝ ճանապարհային ուղղությունների նախնական ցուցիչների տեղադրման, թվով 28 հատ հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղադրման, ինչպես նաև ներքին լուսավորության տեղեկատվական

նշանների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացման համար:

- Առաջարկվում է 2,469,397.1 հազ. դրամ նախատեսել «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով՝ թվով 10 հատ նոր տրոլեյբուսների ձեռքբերման նպատակով:
- Առաջարկվում է 72,051.0 հազ. դրամ նախատեսել <<Երևանտրանս>> ՓԲԸ-ի տարածքում փակ կայանատեղի և ավտովագման կետի կառուցման աշխատանքների իրականացման համար:
- 686.1 հազ. դրամ ավելացնել «Վերելակների հիմնանորոգում» ծրագրին՝ Աջափնակ, Արաբկիր և Նոր Նորք վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման առկա պարտավորությունների մարմանը: Առաջարկվում է նաև ծրագրով նախատեսել 3,260,000.0 հազ. դրամ՝ ի սկզբանե ծրագրով նախատեսված թվով 100 վերելակից բացի ևս 326 հատ նոր վերելակ ձեռք բերելու և տեղադրելու նպատակով:
- «Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում» ծրագրով նախատեսել՝ 9,800.8 հազ. դրամ, որից 8,990.0 հազ. դրամը 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախից Հայաստան ժամանած արցախցիներին Հայաստանից Արցախ տեղափոխելու համար տրանսպորտային փոխադրումների ծառայությունների ձեռքբերման առկա պարտավորությունների մարմանը, իսկ 810.8 հազ. դրամը որպես պարտքի մարում՝ Արաբկիր, Նոր Նորք, Նորք-Մարաշ և Շենգավիթ վարչական շրջաններում հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մասով:
- «Աղբահանություն և սանիտարական մաքրում» ծրագրով նախատեսել 17,646.6 հազ. դրամ՝ փողոցներում և բակային հատվածներում կենցաղային աղբի համար նախատեսված կոնտեյներների տեղադրման համար հարթակների կառուցման

աշխատանքների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով և 14,000.0 հազ. դրամ՝ տրանսպորտային սարքավորումների ձեռքբերմանը՝ կապված շուկայական գնի բարձրացման հետ գնային առաջարկով:

- Առաջարկվում է՝ «Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ» ծրագիրն ավելացնել 131,040.0 հազ. դրամով՝ Երևան քաղաքի վարչական շրջաններում հավաքված շինարարական աղբի բարձման և տեղափոխման ծառայությունների իրականացման համար:
- «Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում» ծրագրով նախատեսել՝ 157,389.7 հազ. դրամ, որից 155,358.0 հազ. դրամ Ներքին Չարքախի կոյուղագծերի կառուցման աշխատանքների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, իսկ 2,031.7 հազ. դրամը կոյուղագծերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման առկա պարտավորությունների մարմանը:
- «Շրջակա միջավայրի և օդի աղտոտման դեմ միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսել՝ 13,900.0 հազ. դրամ՝ Նուբարաշենի թափոնակուտակիչում բիոգազի հավաքման և այրման կայանի շահագործման համար «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին դրամաշնորհ տրամադրելու նպատակով:
- Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 25.05.2021 թվականի N 383-Ա և ՀՀ կառավարության 23.12.2021 թվականի <<Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 2121-Ն որոշումները՝ առաջարկվում է «Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում» ծրագրով նախատեսել՝ 120,860.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարածքում կենցաղային, արտադրական թափոնների և կոյուղու ջրերի թափոնների հետագա մուտքը Հրազդան գետ և դեպի Երևանյան լիճ կանխարգելման և հեռացման աշխատանքների

իրականացման համար, որից 60,430.0 հազ. դրամը իրականացվելու է պետական բյուջեից՝ համաֆինանսավորմամբ:

- «Արտաքին լուսավորության ցանցի արդիականացում» ծրագրով նախատեսվել է՝ 603,058.9 հազ. դրամ, որից 250,000.0 հազ. դրամը որպես դրամաշնորհ ՄԱԶԾ-ի աջակցությամբ քաղաքային լուսավորության էներգաարդյունավետության բանձրացմանն ուղղված ծրագրերով՝ արտաքին լուսավորության համակարգերի արդիականացման ծրագրի իրականացման համար, իսկ 353,058.9 հազ. դրամը Երևան քաղաքի Աշտարակի խճուղու արտաքին լուսավորության հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով:
- «Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում» ծրագրով նախատեսվել է՝ 13,599.0. հազ. դրամ, Ավան վարչական շրջանում հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների, ինչպես նաև Նոր Նորք վարչական շրջանում վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար՝ պարտքի մարման նպատակով:
- «Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում» ծրագրով նախատեսվել է՝ 63,859.6 հազ. դրամ՝ Աջափնյակ վարչական շրջանում Հասրաթյան 6, Սիսակյան 10, Լուկաշինի 6, Ֆուչիկի 2-րդ նրբ. 32, Արաբկիր վարչական շրջանում Բաբայան 36, Կիսյան 2Ա, Կենտրոն վարչական շրջանում Նալբանդյան 50, Պուշկին 72, Սպենդիարյան 4 և 6, Դեմիրճյան 17, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում Սարկավազի 127 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների կապիտալ վերանորոգման պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու և առկա պարտավորությունների մարման նպատակով:
- Առաջարկվում է «Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում» ծրագրով նախատեսվել է՝ 95,579.8 հազ. դրամ՝ որից 458.3 հազ. դրամը պարտքի մարում՝ Աջափնյակ և Նորք Մարաշ վարչական շրջանների, 117.0 հազ. դրամը պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու համար՝ Մալաթիա-Սեֆաստիա վարչական շրջանի բակային տարածքների և

խաղահրապարակների ընթացիկ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով, 87,132.5 հազ. դրամը՝ Արաբկիր վարչական շրջանի Զարյան 17, Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամաս 17,18,19, 4-րդ թաղամաս 3Ա, 4Ա, Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոս 1, Նալբանդյան 25/14, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի 77, Անդրանիկի 138, Շերամի 29, Շերամի 105, Շերամի 57, 59, Իսակով պ. 50/1 շենքի անցուղու աստիճանների, Արարատյան 1գ. 10/2 շ-ից դեպի 10/1 շենքի անցուղու աստիճանների, Անդրանիկի 64 և 66 շենքերի անցուղու աստիճանների, Շենգավիթ վարչական շրջանի Գ. Նժդեհի 21, Ե. Թադևոսյան փ. Թիվ 16-18, Արտաշիսյան 54 շենքերի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների առկա պարտավորությունների մարման և պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով, իսկ 7,872.0 հազ. դրամը Արաբկիր վարչական շրջանի խաղահրապարակների համար խաղային սարքավորումների ձեռք բերման և տեղադրման առկա պարտավորությունների մարմանը: Առաջարկվում է ծրագրով նախատեսել 201,167.0 հազ. դրամ՝ Դավթաշեն վարչական շրջանում, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բակային տարածքների համար խաղասարքերի և մարզասարքերի ձեռքբերման, Նոր Նորք վարչական շրջանում Դավիթ Մալյան նրբ. 2 շենքի հարակից տարածքի աստիճանների հիմնանորոգման գնային տարբերության, Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա թիվ 52/3, Սմբատ Զորավար փող. թիվ 42, Եդ. Թադևոսյան փող. թիվ 5, Ֆրունզե 60ա շենքերի բակերի հիմնանորոգման և այդ նույն բակերում խաղասարքերի և մարզասարքերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացման համար: Նախատեսել նաև 139,273.8 հազ. դրամ՝ Աջափնյակ, Արաբկիր, Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների համապատասխանաբար Նազարբեկյան 9 շենքի հարևանությամբ, Օրբելի 65ա շենքի բակային տարածքում, Դավթաշեն 2-րդ թաղ. հ.41

շենքի(հ.192 դպրոցի) հարևանությամբ, Անդրանիկի հ.117 շենքի բակային տարածքում, Բաղյան 14 հասցեում, Նորքի 6-րդ փողոց հ.26 տան դիմաց, Վարչավյան փող` Հ. Պարոնյանի անվան հ.59 հիմնական դպրոցի դիմաց հասցեներում փոքր(մինի) ֆուտբոլի դաշտերի կառուցման նպատակով:

- «Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ» ծրագրով նախատեսել 2,005.9 հազ. դրամ ` Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի հ.19 շենքի ամրացման աշխատանքների առկա պարտավորությունների մարման և պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով:
- «Զրային կառույցների շահագործում և պահպանում» ծրագիրն ավելացնել 27,000.0 հազ. դրամ` Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և պահպանման նպատակով:
- «Վթարային պատշգամբների նորոգում» ծրագրով նախատեսել 8,529.6 հազ. դրամ` Շենգավիթ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքների պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով:
- «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսել 70.0 հազ. դրամ ` թիվ 20 պոլիկլինիկայի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պայմանագրային պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով:
- «Սպորտային միջոցառումների կազմակերպում» ծրագրով նախատեսել 103.4 հազ. դրամ որպես պարտքի մարում` Դավթաշեն վարչական շրջանում իրականացված միջոցառման համար:
- «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում» ծրագրով նախատեսել ` 129,646.0 հազ. դրամ` Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածի լուսավորության կարգավորման աշխատանքների, Նոր Արաբկիր զբոսայգու բարեկարգման աշխատանքների առկա պարտավորությունների մարման և պայմանագրային

պարտավորությունները ավարտին հասցնելու նպատակով: Առաջարկվում է նաև ծրագիրն ավելացնել 589,609.0 հազ դրամով՝ Երևանյան լճի աջակողմյան հատվածում հանգստի գոտու կառուցման, Աբովյան պուրակի բարեկարգման, Հաղթանակի 40-ամյակի հուշահամալիրի այգու բարեկարգման (նախահաշվային գնի տարբերության), այգիներում և հրապարակների թվով 6 շատրվանների և 12 պոմպի հիմնանորոգման, Նոր Նորք վարչական շրջանի Վիլնյուս 101 շենքի հարակից տարածքում գտնվող պուրակի բարեկարգման (նախահաշվային գնի տարբերության) աշխատանքների իրականացման նպատակով:

- «Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում ու պահպանում» ծրագրով նախատեսել 209.3 հազ. դրամ՝ Մալաթիա-Սեֆասիա վարչական շրջանի Հաղթանակ թաղամասում սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցման և պահպանման հեղինակային հսկողության ծառայության ձեռքբերման առկա պարտավորության մարման նպատակով:
- «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսել 1,857.6 հազ. դրամ՝ Դավթաշեն վարչական շրջանում ամանորյա քաղցրավենիքի նվեր-փաթեթների ձեռքբերման նպատակով՝ որպես պարտքի մարում:
- «Հուշարձանների վերանորոգում և պահպանում» ծրագրով նախատեսել 96,469.9 հազ. դրամ՝ որից 59.9 հուշարձանների պատվանդանների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով՝ որպես պարտքի մարում, իսկ 96,410.0 հազ. դրամը՝ 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանի պատրաստման և տեղադրման աշխատանքների կատարման համար:
- ՀՀ պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացում» ծրագրով նախատեսել 37,651.5 հազ.

դրամ՝ Կարեն Դեմիրճյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի կառուցման աշխատանքները ավարտին հասցնելու նպատակով:

- «Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում» ծրագրով նախատեսել 79,000.0 հազ. դրամ՝ Շենգավիթ վարչական շրջանում գործող «Երևանի Շենգավիթ համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տարածքում թվով 2 թենիսի կորտերի կառուցման և այդ ՀՈԱԿ-ի տանիքին արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման նպատակով:
- «Նախադպրոցական հաստատությունների կառուցում և վերանորոգում» ծրագրով նախատեսել 386,722.5 հազ. դրամ՝ պայմանագրային պարտավորությունների անցումն ընթացիկ բյուջետային տարի ապահովելու նպատակով, մասնավորապես՝ Դավթաշեն վարչական շրջանի հ. 58, Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի հ. 82, Շենգավիթ վարչական շրջանի հ. 146 մանկապարտեզների հիմնանորոգման մասով: Առաջարկվում է նաև ծրագրով նախատեսել ևս 850,016.7 հազ. դրամ, որից 147,021.8 հազ. դրամը Աջափնյակ վարչական շրջանի հ. 36 և հ.48 մանկապարտեզների բակերի բարեկարգման և Էրեբունի վարչական շրջանի հ. 72 մանկապարտեզի ջեռուցման համակարգը թիվ 178 դպրոցի ջեռուցման համակարգից առանձնացնելու, իսկ 702,994.9 հազ. դրամը՝ ՄԱԶԾ-ի աջակցությամբ իրականացվող Էներգախնայողությանն ուղղված ծրագրերով՝ Աջափնյակ վարչական շրջանի հ.37, Էրեբունի վարչական շրջանի հ.73, Կենտրոն վարչական շրջանի հ. 19, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.83, Նոր Նորք վարչական շրջանի հ.111, հ.113, հ.120, Նորք-Մարաշ վարչական շրջանի հ.122, Շենգավիթ վարչական շրջանի հ.130, հ.131, հ.145, Քանաքե-Զեյթուն վարչական շրջանի հ.150 մանկապարտեզների տանիքների հիմնանորոգումն իրականացնելու նպատակով:
- Առաջարկվում է «Առողջության ապահովագրություն» ծրագրով նախատեսել՝ 59,508.0 հազ. դրամ՝ «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի թվով 923 և «Զրային կառույցներ» ՓԲԸ-ի թվով 121 աշխատակիցների համար 2022

թվականին առողջապահական ապահովագրություն իրականացնելու նպատակով:

- Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի 2022 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի վարչական մասը ավելացնել՝ 4,152,250.0 հազ. դրամ, իսկ ֆոնդային մասը ավելացնել՝ 230,000.0 հազ. դրամով:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 497-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 497-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի եկամուտները ավելանում են 11,917,396.5 հազ. դրամով, ծախսերը ավելանում են 29,659,587.0 հազար դրամով, դեֆիցիտը ավելանում է 17,742,190.5 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 497-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի N	Ընդամենը	(հազար դրամներով) այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		11,917,396.5	11,854,864.8	(5,312,923.2)
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150) այդ թվում՝	7100	44,225.0	44,225.0	-
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306+ տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310+ տող 11311 + տող 11312 + տող 11313 + տող 11314 + տող 11315 + տող 11316 + տող 11317 + տող 11318 + տող 11319) այդ թվում՝	7145	44,225.0	44,225.0	-
11304	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում, խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար		49,800.0	49,800.0	-
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար		(3,800.0)	(3,800.0)	
11311	Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար		(275.0)	(275.0)	-
11315	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծխակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար		34,500.0	34,500.0	-
11317	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար		300.0	300.0	-
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար		11,250.0	11,250.0	-
11319	Այլ տեղական տուրքեր		(47,550.0)	(47,550.0)	-
1200	2. ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝	7300	112,616.7	50,085.0	62,531.7
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7322	58,531.7	-	58,531.7
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		58,531.7	-	58,531.7
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256)	7331	50,085.0	50,085.0	-

Տողի NN	Եկամտատեսակները	Հոլվածի NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		50,085.0	50,085.0	-
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262) այդ թվում՝	7332	4,000.0	-	4,000.0
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		4,000.0	-	4,000.0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝	7400	11,760,554.8	11,760,554.8	(5,375,454.9)
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) այդ թվում՝	7415	(58,647.3)	(58,647.3)	-
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		(58,647.3)	(58,647.3)	-
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342 + տող 1343) այդ թվում՝	7421	11,811,552.1	11,811,552.1	-
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		11,811,552.1	11,811,552.1	
1350	3.5 Վարչական զանձումներ (տող 1351 + տող 1352 + տող 1353) այդ թվում՝	7422	3,000.0	3,000.0	-
1351	Տեղական վճարներ (տող 13501 + տող 13502 + տող 13503 + տող 13504 + տող 13505 + տող 13506 + տող 13507 + տող 13508 + տող 13509 + տող 13510 + տող 13511 + տող 13512 + տող 13513 + տող 13514 + տող 13515 + տող 13516 + տող 13517 + տող 13518 + տող 13519+ տող 13520) այդ թվում՝		3,000.0	3,000.0	-
13501	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար		3,000.0	3,000.0	-
13502	Հարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ծեփերի համար		101,000.0	101,000.0	-
13503	Հարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ծեփերի համար		(101,000.0)	(101,000.0)	-
1370	3.7 Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտներ (տող 1371 + տող 1372) այդ թվում՝	7441	4,650.0	4,650.0	-

Տողի NN	Եկամտատեսակները	Հոլվածի NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից		4,650.0	4,650.0	-
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393) այդ թվում՝	7452	-	-	(5,375,454.9)
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		(5,375,454.9)	-	(5,375,454.9)

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի _____-ի
N _____ - Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 497-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2
ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	29,659,587.0	11,885,298.0	12,398,834.1
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	337,035.0	16,807.7	320,227.3
				այդ թվում՝			
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>	304,977.9	16,807.7	288,170.2
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	304,977.9	16,807.7	288,170.2
2150	01	5	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ</i>	32,057.1	-	32,057.1
				որից՝			
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	32,057.1	-	32,057.1
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	19,605,689.3	10,739,688.6	8,866,000.7
				այդ թվում՝			
2420	04	2	0	<i>Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն</i>	235,648.4	-	235,648.4
				որից՝			
2424	04	2	4	Ոռոգում	235,648.4	-	235,648.4
2420	04	3	0	<i>Վառելիք և էներգետիկա</i>	523,511.2	36,587.4	486,923.8
				որից՝			
2424	04	3	5	Էլեկտրաէներգիա	523,511.2	36,587.4	486,923.8
2450	04	5	0	<i>Տրանսպորտ</i>	18,836,728.9	10,693,300.4	8,143,428.5
				որից՝			
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	15,821,864.9	10,939,122.5	4,882,742.4
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	3,014,864.0	(245,822.1)	3,260,686.1
2490	04	9	0	<i>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</i>	9,800.8	9,800.8	-
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	9,800.8	9,800.8	-
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	333,108.8	23,212.5	309,896.3
				այդ թվում՝			
2510	05	1	0	<i>Աղբահանում</i>	40,959.1	9,312.5	31,646.6
				որից՝			
2511	05	1	1	Աղբահանում	40,959.1	9,312.5	31,646.6
2520	05	2	0	<i>Կեղտաջրերի հեռացում</i>	157,389.7	-	157,389.7

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				որից՝			
3521	05	2	1	Կեղտաջրերի հեռացում	157,389.7	-	157,389.7
2530	05	3	0	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	13,900.0	13,900.0	-
				որից՝			
3531	05	3	1	Օդի աղտոտման դեմ պայքար	13,900.0	13,900.0	-
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	120,860.0	-	120,860.0
				որից՝			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	120,860.0	-	120,860.0
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՒ ՆԱԲԱՐՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	1,437,557.2	231,187.5	1,206,369.7
				այդ թվում՝			
2610	06	1	0	Բնակարանային շինարարություն	500,000.0	-	500,000.0
				որից՝			
2611	06	1	1	Բնակարանային շինարարություն	500,000.0	-	500,000.0
2640	06	4	0	Փողոցների լուսավորում	386,542.5	181,483.6	205,058.9
				որից՝			
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	386,542.5	181,483.6	205,058.9
2660	06	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	551,014.7	49,703.9	501,310.8
				որից՝			
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	551,014.7	49,703.9	501,310.8
2700	07	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	70.0	-	70.0
				այդ թվում՝			
2760	07	6	0	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	70.0	-	70.0
				որից՝			
2761	07	6	1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	70.0	-	70.0
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	855,546.7	2,020.9	853,525.8
				այդ թվում՝			
2810	08	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ	719,567.7	103.4	719,464.3
				որից՝			
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	719,567.7	103.4	719,464.3
2820	08	2	0	Մշակութային ծառայություններ	135,979.0	1,917.5	134,061.5
				որից՝			
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	1,857.6	1,857.6	-
2827	08	2	7	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	134,121.4	59.9	134,061.5
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	2,824,804.1	2,212,059.8	612,744.3
				այդ թվում՝			
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	563,810.4	563,810.4	-
				որից՝			
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	4,191.9	4,191.9	-
2911	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն	559,618.5	559,618.5	-
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն	931,746.3	931,746.3	-
				որից՝			
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	900,795.9	900,795.9	-
2922	09	2	2	Միջնակարգ(ըրիվ) ընդհանուր կրթություն	30,950.4	30,950.4	-

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	72,376.2	(6,623.8)	79,000.0
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	72,376.2	(6,623.8)	79,000.0
2960	09	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	1,256,871.2	723,126.9	533,744.3
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	1,256,871.2	723,126.9	533,744.3
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	60,012.0	60,012.0	-
				այդ թվում՝			
3090	10	9	0	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	60,012.0	60,012.0	-
				որից՝			
3092	10	9	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	60,012.0	60,012.0	-
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	4,205,763.9	(1,399,691.0)	230,000.0
				այդ թվում՝			
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	4,205,763.9	(1,399,691.0)	230,000.0
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	4,205,763.9	(1,399,691.0)	230,000.0

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի _____-ի
N _____ - Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 497-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3
ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		29,659,587.0	11,885,298.0	12,398,834.1
	այդ թվում՝				
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝	x	17,260,752.9	11,885,298.0	230,000.0
	այդ թվում՝				
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	250,057.9	250,057.9	-
	այդ թվում՝				
4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	x	202,125.4	202,125.4	-
	որից՝				
4213	-Կոմունալ ծառայություններ	4213	131,043.6	131,043.6	-
4214	-Կապի ծառայություններ	4214	11,573.8	11,573.8	-
4215	- Ապահովագրական ծախսեր	4215	59,508.0	59,508.0	-
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	9,779.3	9,779.3	-
	որից՝				
4234	-Տեղակատվական ծառայություններ	4234	20.1	20.1	-
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	9,759.2	9,759.2	-
4240	ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	17.6	17.6	-
	որից՝				
4241	-Մասնագիտական ծառայություններ	4241	17.6	17.6	-
4250	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (Ծառայություններ և նյութեր)	x	36,115.0	36,115.0	-
	որից՝				
4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	36,115.0	36,115.0	-
4260	ՆՅՈՒԹԵՐ	x	2,020.6	2,020.6	-
	որից՝				
4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	2,020.6	2,020.6	-
4400	1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	x	1,440,254.7	1,440,254.7	-
	այդ թվում՝				
4410	ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	x	1,440,254.7	1,440,254.7	-
	որից՝				
4411	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	1,440,254.7	1,440,254.7	-
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	x	988,007.2	988,007.2	-

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
	այդ թվում՝				
4530	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՍԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ	x	988,007.2	988,007.2	-
	որից՝				
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	20,132.0	20,132.0	-
4532	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին	4638	980.3	980.3	-
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	966,894.9	966,894.9	-
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՄՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	x	21,468.5	21,468.5	-
	այդ թվում՝				
4630	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՄՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)	x	21,468.5	21,468.5	-
	որից՝				
